

Ա Մ Բ Ո Ւ Ն

ԱՐՄԻԻԵԱՆԻ

Ի՞նչ ես պահանջում, կատաղի՛ ամբոխ,
Դու ազատ երգչի անկեղծ քընարից.
Ի՞նչ ես դու, որպէս չարանենդ ոսոխ,
Հալածում նորան՝ կուրացած կրքից:

Ի՞նչ ես պահանջում... Արդեօք ուզում ես,
Որ նա իւր սրտի խանդն ու զգացմունք
Ձոհելով կամքիդ՝ երկրպագէ քեզ,
Եւ քո առաջն խոնարհէ՛ իւր ծունկ:

Արդեօք ուզում ես, որ նա սրբազան
Իւր մաքուր՝ երգը, որպէս մի վաճառք
Հանելով փողոց՝ քսու մեծատան
Դրւատէ՛ գործեր զազիր և անարգ:

Արդեօք ուզում ես, որ նա ստրկացած,
Որպէս անլեզու մի թշուառ գերի,
Խոնարհւի՛ այնտեղ, ուր գետնատարած
Դու ոտք ես լիզում ունևորների:

Ո՛չ... ամբո՛խ տգէտ, ամբո՛խ դու թշուառ,
Ձուր են քո ջանքեր, ցնորք—քո պահանջ.
Ե՞րբ ես տեսել դու, որ լոյսը պայծառ
Ընկճւի, խորտակւի խաւարի առաջ...

Ե՞րբ ես տեսել դու, որ երկրի կրճքից
 Ուժգին դուրս ժայթքող հըրաբուխն անշէջ
 Հանգչէ գէթ վայրկեան հեղեղ—անձրևից,
 Թէ անգամ նոքա տեղան միշտ, անվերջ:

Ասա, տեսած կ'աս, որ դէպի երկինք
 Անվախ սաւառնող հզօր արծւին
 Սարսեցնեն մըրիկ, որոտ, փոթորիկ,
 Երբ նա լողում է ամպերի միջին...

Մօսկւա. 1889 թ., մարտի 20.